

2.

ՆՊԱՏԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ TELEOLOGICAL ETHICS

Հարց տալէ առաջ թէ ի՞նչ է՝ **նպատակաբանական բարոյագիտութիւնը**՝ հարկ է նախ անդրադառնալ **նպատակաբանութիւն** եզրին, որպէս հասկացութիւն:

Նպատակաբանութիւն⁽⁶⁶⁾ հասկացութիւնը հոմանիշն է եւրոպական զանազան լեզուներու մէջ ներկայացող՝ Teleology (տելեոլոգիա) բառին, որ կազմուած է յունարէն *télos* եւ *lógos* եզրերէն. *télos* կը նշանակէ՝ նպատակ, վախճան. իսկ *lógos* կը նշանակէ՝ բան, խօսք. որմէ՝ նպատակաբանութիւն, նպատակաբանական եւայլն...:

Նաեւ Հայերէնի մէջ *նպատակը* կը ներկայանայ քանի մը իմաստներով.՝ նախ նպատակը այն մտադրութիւնն է, որով մարդ կը ձգտի՝ բանի մը հասնիլ. ապա կը նշանակէ՝ վախճան, թիրախ, փափաք ու նպատակակէտ:

Նպատակաբանութիւնը, որպէս աշխարհայացք, կը հիմնուի արտաքին ու ներքին *վերջին նպատակներուն* (լատ.՝ *causa finalis*, անգլ.՝ *Final Cause*, գերմ.՝ *Zweckursache*) վրայ.՝ Արտաքինը՝ անդրանցական (Transcendental) ըմբռնումն է իսկ ներքինը՝ ներյատուկ (Immanent) ըմբռնումը:

Նպատակաբանութիւնը (Teleology) եւ *պատճառականութիւնը* (Causality) հակադիր երկու ուղիներ են, որոնց մասին անդրադարձած են բազմաթիւ փիլիսոփաներ, հնադարեան ժամանակներէն սկսեալ: Մինչ երկապաշտութեան (Dualism) համաձայն, նպատակաբանութիւնը կը հակադրուի պատճառականութեան ... միապաշտութեան (Monism) համաձայն, սակայն, անոնք կը ներկայանան որպէս զիրար ամբողջացնող երեւոյթներ:

Նպատակաբանութեան ոլորտէն ներս անշուշտ բանականութիւնը ունի իր շատ կարեւոր դերը: Այլ խօսքով, մեր նպատակին հասնելու համար՝ մենք պէտք է նախ նկատի ունենանք զանազան կարելիութիւնները՝ ապա անոնցմէ ընտրենք մեզի համար ամենահամոզիչը ու վերջապէս գործի անցնինք՝ ամենազղեցիկ միջոցները օգտագործելով:

Նաեւ բարոյագիտութեան տեսութիւն մը կարելի է *նպատակաբանական* անուանել, երբ նկատի ունենանք վարմունք մը, իր *բարի* նպատակով ու դիտաւորութեամբ:



(66) **Նպատակաբանութիւն** (Teleology) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 510: